15723

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«27» 12 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ 0233-21

***Ձեռնարկողը՝*** ***«Նյու Էյջ Քոնսթրաքշն» ՍՊԸ***
*ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 1*

***Գործունեությունը՝*** ***Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի 9/5 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 1*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0233-21
«27» 12 2021թ.

***Գյումրի քաղաք, Գարեգին Նժդեհի փողոց 9/5 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիր կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «Նյու Էյջ քոնսթրաքշն» ՍՊԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ |
| Գործունեությունը՝ | «Գ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ.Նժդեհ փողոց 9/5 |

***Ներածական մաս***. Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի:
Նախագծվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 1750 ք.մ, ուստի սույն նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:
Բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Գյումրի, Գ.Նժդեհ փող. 9/5 հասցեում:
Նախատեսվող աշխատանքներն իրականացվելու են համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և համապատասխանում են գործող շինարարական և նախագծային նորմերին և կանոններին:
Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաբնակարան բնակելի համալիր:

***Նկարագրական մաս.*** Բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ք. Գյումրի, Գ.Նժդեհ փող. 9/5 հասցեում: նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ, բնակելի համալիր, որը բաղկացած է՝ 1 ստորգետնյա հարկից (-3.600 նիշում, որը տեղակայված է շինության ողջ պարագծով), վերգետնյա (հիմնական ծավալը) բաղկացած է 5 և տերրասային 6-րդ և 7-րդ հարկերից:
Գեոմորֆոլոգիական տեսակետից կառուցապատվող տարածքը տեղադրված է էրոզիոնահողմնահարման լանջերի և հարավային սարավանդի սահմաններում, որտեղ ռելիեֆը մանր բլրային է, առանձին դեպքերում հարթ, աննշան թեքությամբ դեպի հյուսիս-արևելք:
Գործունեության տարածքը գտնվում է Գյումրի քաղաքային միջավայրում, կառուցապատված գոտում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

Տարածքում տեղ-տեղ հանդիպում են բուսածածկույթը և հողային ծածկույթը: Տարածքն արդեն իսկ խախտված է, նախկինում օգտագործվել է տարբեր արտադրական նպատակներով: Քարքարոտ, ավազային, հողածածկույթի վրա տեղ-տեղ վայրի ծառատեսակներ են, տեղ-տեղ ինքնաբերաբար աճած նոսր բուսականություն և քանի որ, բնութագրվող տեղանքը գտնվում է արդեն իսկ յուրացված և կառուցապատված քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ և կենդանիների միգրացիոն ուղիներ չեն դիտարկվում:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողի ընդհանուր մակերես՝ 0.56565 հա,
- կանաչապատման մակերես՝ 1450 ք.մ.,
- կառուցապատման մակերես՝ 1750 ք.մ.,
- ճանապարհ – 1070 ք.մ,
- մայթ, ճեմուղի – 1386.5 ք.մ.,
- բնակարանների քանակ 90 հատ,
- ավտոկայանատեղիների ընդհանուր քանակ 36 ավտոկայանատեղ:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Հիմնական մոտեցումն իրականացվելու է Գարեգին Նժդեհ և Պռոշյան փողոցներից: Շինության տեղակապումը և հարկայնությունն ընտրված են համաձայն գործող քաղաքաշինական և անվտանգության նորմերի, հաշվի առնելով հարակից շինությունների հարկայնությունները և հեռավորությունները վերջինից:

Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ, իսկ շենքերի ստորգետնյա ավտոկայանատեղիների տարածքները՝ արտակարգ իրավիճակների պայմաններում օգտագործվելու են որպես ապաստարաններ:

Շենքի բնակելի մասից և ավտոկայանատեղիներից իրականացվելու է ծխահեռացում, իսկ հակահրդեհային համակարգերի գործարկումը կատարվելու է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Ա դասի, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են բարձր ջերմության խնայողության ցուցանիշներ:

Շենքի ընդհանուր օգտագործման տարածքներում տեղակայված է ծխահեռացման և օդի ներածման համակարգը, աստիճանավանդակում իրականացված հավելյալ կոմպենսացիոն համակարգ: Բնակարանների ջեռուցումը, հովացումը և օդափոխությունը նախատեսվում է իրականացնել լոկալ եղանակով:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է

համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով տրվելու է տեխնիկական պայման: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել d=110մմ ջրագծից, ջրահեռացումը՝ d=500մմ կոյուղագծից՝ ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված վերջնական տեխնիկական պայմանի: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով՝ Գյումրի

քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Էլեկտրամատակարումը նախատեսվում է «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» էլ. ցանցի S4634 6/0.4 «ՏԵ 077» 6.04 կՎ տրանսֆորմատորային ենթակայանից, շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի:

Կաթսայատան գազամատակարարումը կիրականացվելու է Գարեգին Նժդեհ և Պռոշյան փողոցների խաչմերուկում գտնվող սնող d=219մմ միջին ճնշման ստորգետնյա գազատարից:

Ինչպես նաև նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև գրունտային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 9000խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 3140խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Գյումրու քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

**Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝** Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնք են՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում,
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական մի շարք միջոցառումներ.

1. Օդային ավազանը աղտոտումի պահպանելու համար նախատեսվում են՝
   - շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականցում,
   - շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգաորման իրականացում,
   - շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխման իրականցում փակ ծածկով մեքենաներով,
   - սորուն նյութերի պահեստները ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելի փոշու տարածումը:

2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.
- ջրցանի ծավալները այնպեսի հաշվարկվում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որը գտնվում է շինարարական հրապարակին կից և իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ իրականացվելու են 500քմ մակերեսով տարածքի վրա, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, իսկ պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.
- շինարարական նյութերը տեղփոխում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ ապահովվում, ինչպես նաև ժամանակակից տեխնիկակակն միջոցների ներգրավվում,
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:
Նախատեսվում է իրականացնել կանաչապատում, որը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1450 քմ: Տարածքում նախատեսվում է տնկել՝
- թխկի 8 հատ,
- իլենի 35 հատ,
- լաբորնում 2 հատ,
- խենոմելես 10 հատ,
- ասպիրակ 12 հատ,
- բարբարիս 8 հատ:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 180խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Գյումրիի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա թվարկված հնարավոր վնասակար ազդեցություններից բացի հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, աշխատողների վնասվածքներ, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն, որոնց ազդեցությունների հնարավոր բացառման և նվազեցման համար ևս նախատեսվում են մի շարք միջոցառումները՝ մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողների, այդ թվում նաև վարորդների, հրահանգավորման անցկացում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհների և անցումների միշտ ազատ լինելու ապահովում, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակների տեղադրում, հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝

հնարավոր արտահոսքերը բացառելու համար, բոլոր աշխատողներին անհատական պաշտպանության միջոցներով ապահով և մի շարք այլ միջոցառումներ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանք տեխնիկական նորմալ վիճակում շահագործում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի դրանց աղմուկի մակարդակին:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը 26.25տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 350խմ շինարարական աղբը (հիմնականում կազմված են լինելու իներտ ֆրակցիաներից, բետոն, աղյուս, կերամիկա և այլն) այդ թվում տարածքում առկա շինությունների քանդումից առաջացող, որը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության կոմից հետևողականություն կսահմանվի տնկված ծառերի աճի և խնամքի համար, ոչ կեսունակ ծառերը և թփերը կփոխարինվեն նորերով:

Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1700000 դրամ:

Շինարարական աշխատանքները կատարվելու է պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

***Պատճառաբանական մաս.*** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Շիրակի մարզ, ք. Գյումրիի համայնքապետարանի շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի»

նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», «Շիրակի մարզպետարանի» կողմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

## Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
4. Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):
5. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը:

Շինարարության ընթացքում և աշխատանքների ավարտից հետո, որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- շինհրապարակի տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ, տեղադրել մուտք գործող արգելող նշաններ,
- շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել, հնարավորինս բերելով սկզբնական վիճակի,
- ամբողջ շինարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից,

- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,
- շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից չի առաջանա ջրի արտահոսք,
- շինհրապարակից ելքի ժամանակ անհրաժեշտ է տեխնիկական միջոցների անվադողերի լվացում,
- համաձայն Շիրակի մարզ, Գյումրու համայնքի կողմից 18.7.2021թ. տրված N88 ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ ապահովել հողամասի մինչև 60% կանաչապատման տարածք (առանց ստորգետնյա կառուցապատման):
- կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքներ՝ համաձայն կանաչապատման բարեկարգման նախագծի և պլանների, ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականություն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը, կանաչապատումը իրականցնել տարածի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային տեսակներով, ձեռնարկել տնկված թփերի, ծառերի, խոտածածկի պահպանում և մոնիտորինգ բուսականության բարձր աճն ապահովելու համար, կպչողականություն չապահովող ծառատեսակները փոխարինել նորերով:

Առաջարկվող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Գյումրի քաղաք, Գարեգին Նժդեհի փողոց 9/5 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիր կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան